ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-56-Ն-22
2025թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-Ի ԹԻՎ ԲԴԽ-8-Ն-4 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Բարձրագույն դատական խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1. Բարձրագույն դատական խորհրդի 2024 թվականի փետրվարի 1-ի «Դատարաններում էլեկտրոնային համակարգի վարման և դրանից օգտվելու, ծավալուն էլեկտրոնային ֆայլերի, ինչպես նաև էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացնելու անհնարինությամբ պայմանավորված էլեկտրոնային ֆայլերի ներկայացման կարգը սահմանելու մասին» թիվ ԲԴԽ-8-Ն-4 որոշման մեջ (այսուհետ՝ Որոշում) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Որոշման նախաբանում «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11.1.-րդ գլխի» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 11.1.-ին գլխի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 11.1.-ին գլխի» բառերով,

2) Որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության «իրավաբանական անձինք» բառերից առաջ լրացնել «Քաղաքացիական դատավարության դեպքում» բառերը,

3) Որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետը լրացնել նոր պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«գ. վարչական դատավարության դեպքում՝ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, վարչարարություն իրականացնող մարմինները, դրանց պաշտոնատար անձինք,

նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործին մասնակցող անձինք, հավաքի անցկացման մասին համայնքի ղեկավարի որոշումների և գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործին մասնակցող անձինք, ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործին մասնակցող անձինք (բացի հայցվորից), դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործով հայցվորները, անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ գործին մասնակցող անձինք, հասարակական կազմակերպության ներկայացրած հայցով գործին մասնակցող անձինք, լիցենզիայի հետ կապված լիազոր մարմնի որոշումների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործին մասնակցող անձինք, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի եզրակացությունները փաստի հիմքով վիճարկելու վերաբերյալ գործին մասնակցող անձինք, կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից իրավիճակային հայտարարագիր ներկայացնելու որոշման իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործին մասնակցող անձինք, կարանտինի պայմաններում օրենքով սահմանված միջոցառումների կիրառման շրջանակներում ընդունված ակտերի իրավաչափության վիճարկման գործով պատասխանողները, անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վարույթով պատասխանողները, ներկայացուցիչ հանդիսացող փաստաբանները, սնանկության գործով կառավարիչները, արտոնագրված հաշտարարները և նոտարները՝ անկախ տվյալ վարչական գործի շրջանակներում Համակարգի միջոցով առնվազն մեկ անգամ որևէ գործողություն կատարած լինելուց կամ չլինելուց:»,

4) Որոշմամբ սահմանված հավելվածի 4-րդ կետի 3-րդ ենթակետում «իրեն տրված» բառերից հետո լրացնել «կամ նախասահմանված» բառերը,

5) Որոշմամբ սահմանված հավելվածի 7-րդ կետը շարադարել նոր խմագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«7. Համակարգ մուտք գործելն իրականացվում է՝ քաղաքացիական դատավարության դեպքում՝ https://cabinet.court.am կայքի, վարչական դատավարության դեպքում՝ https://e-administrativecourt.am կայքի միջոցով:»,

6) Որոշմամբ սահմանված հավելվածի 8-րդ կետում «ինչպես նաև» բառերը փոխարինել «իսկ քաղաքացիական դատավարության դեպքում նաև» բառերով,

7) Որոշմամբ սահմանված հավելվածի 11-րդ կետի առաջին նախադասության մեջ «Ֆիզիկական» բառը փոխարինել «Քաղաքացիական դատավարության դեպքում ֆիզիկական» բառերով,

8) Որոշմամբ սահմանված հավելվածի 12-րդ կետում «Համակարգ մուտք գործելու» բառերից առաջ լրացնել «Քաղաքացիական դատավարության դեպքում» բառերը,

9) Որոշմամբ սահմանված հավելվածի 13-րդ կետում «Համակարգում մուտքանուն և գաղտնաբառ» բառերից առաջ լրացնել «Քաղաքացիական դատավարության դեպքում» բառերը,

10) Որոշմամբ սահմանված հավելվածը լրացնել նոր 13.1-ին կետով՝ հետևյալ

բովանդակությամբ.

«13.1 Վարչական դատավարության դեպքում համակարգն օգտագործողներն առաջին անգամ Համակարգ են մուտք գործում «ԵՍ ԵՄ» հարթակով նույնականացվելու միջոցով:»,

11) Որոշմամբ սահմանված հավելվածի Որոշման 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14. Քաղաքացիական դատավարության դեպքում անձնական գրասենյակից յուրաքանչյուր առանձին գործով որոշակի գործողություններ կատարելիս անձը կարող է կատարել ընտրություն՝ գործողությունը կատարել իր կամ այլ անձի անունից՝ որպես ներկայացուցիչ, իսկ վարչական դատավարության դեպքում համակարգ մուտք գործելիս կամ մուտք գործած ժամանակ համապատասխան բաժնից անձը կարող է կատարել ընտրություն՝ համակարգից օգտվել իր կամ այլ անձի անունից՝ որպես ներկայացուցիչ:»,

12) Որոշմամբ սահմանված հավելվածի 19-րդ կետում «Համակարգի օգտատերը Համակարգում» բառերից առաջ լրացնել «Քաղաքացիական դատավարության դեպքում» բառերը,

13) Որոշմամբ սահմանված հավելվածը լրացնել նոր 19.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«19.1. Վարչական դատավարության դեպքում Համակարգի օգտատերը Համակարգում էլեկտրոնային հայցադիմումը ստեղծում է անձնական գրասենյակ մուտք գործելու միջոցով: Սեղմելով «Նոր հայց» կոճակը՝ Համակարգի օգտատերը լրացնում է հայցի ստեղծման համար պահանջվող դաշտերը՝ «Հայցվոր/ներ և նրա ներկայացուցիչ/ներ», «Պատասխանողներ», «3-րդ անձինք», «Հայց», «Դիմում/միջնորդություններ», «Փաստաթղթեր», «Դատական ծախսեր», «Պետական տուրք»:»,

14) Որոշմամբ սահմանված հավելվածը լրացնել նոր 20.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«20.1. Սույն որոշման 19.1-ին կետում նշված գործողություններն իրականացնելուց հետո ստեղծվում է հայցադիմումի սևագիր տարբերակը և համապատասխանաբար դատական գործը: Ստեղծված հայցադիմումը և դատական գործը հայտնվում են օգտատիրոջ անձնական գրասենյակի գործերի ցանկում՝ «Սևագիր» կարգավիճակով: Հայցադիմումի ավարտական տարբերակը ստեղծվում է «Ավարտել» կոճակը սեղմելուց և հայցադիմումը ստորագրելուց հետո:»,

15) Որոշմամբ սահմանված հավելվածի 23-րդ կետում «համարանիշը» բառից հետո լրացնել «կամ հարկ վճարողի հաշվառման համարը» բառերը,

16) Որոշմամբ սահմանված հավելվածի 24-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«24. Ֆիզիկական անձը դատական գործով որպես պատասխանող, երրորդ անձ ներգրավված լինելու մասին փոստով ծանուցվելու դեպքում կարող է մուտք գործել Համակարգ և հասանելիություն ունենալ իրեն վերաբերվող դատական գործին՝

քաղաքացիական դատավարության դեպքում՝ https://cabinet.armlex.am/ կայք, իսկ վարչական դատավարության դեպքում՝ https://e-administrativecourt.am կայք մուտք գործելու և eID նույնականացման քարտի կամ mID բջջային քարտի միջոցով գրանցվելու միջոցով:»,

17) Որոշմամբ սահմանված հավելվածի 27-րդ կետում «միջոցով» բառից առաջ լրացնել «կամ Համակարգում մուտքագրված էլեկտրոնային փոստին հաղորդագրություն ուղարկելու» բառերը,

18) Որոշմամբ սահմանված հավելվածը լրացնել նոր 49.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«49.1. Համակարգի միջոցով՝ Համակարգի կողմից տրամադրվող գործիքակազմին և առաջադրվող պահանջներին համապատասխան կազմված դատավարական փաստաթղթերի վրա առկա անհատական գաղտնագրի միջոցով հնարավոր է ստուգել տվյալ դատական ակտի կարգավիճակը»,

19) Որոշմամբ սահմանված հավելվածը լրացնել նոր 61.1-ին կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«61.1. Մինչև Համակարգի միջոցով հայցադիմումը վերահասցեագրելու տեխնիկական լուծումների ներդրումը դատարանի կողմից հայցադիմումի պահանջը ըստ ընդդատության վերահասցեագրելու մասին որոշում կայացնելու դեպքում գործն ուղարկվում է համապատասխան դատարան և՛ նյութական եղանակով, և՛ էլեկտրոնային կրիչով»,

20) Որոշմամբ սահմանված հավելվածը 62-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«62. Դատական նիստերի արձանագրությունները վերբեռնվում են Համակարգ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 11.1.-ին գլխի 22.12.2023թ. ՀՕ-12-Ն օրենքի լրացման մասով ուժի մեջ մտնելու օրվանից բայց, ոչ շուտ քան պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ

2025թ օգոստոսի 25
ք. Երևան